



*Համարը* N 740-Ն  
*Տիպը* Հրաման  
*Սկզբնաղբյուրը* ՀՀԳՏ 2006.11.01/26(235)  
Հոդ. 382

*Ընդունող մարմինը* Կրթության և գիտության նախարար

*Ստորագրող մարմինը* Կրթության և գիտության նախարար

*Վավերացնող մարմինը*  
*Ուժի մեջ մտնելու ամսաթիվը* 11.11.2006

*Տեսակը* Ինկորպորացիա  
*Կարգավիճակը* Գործում է  
*Ընդունման վայրը* Երևան

*Ընդունման ամսաթիվը* 15.09.2006

*Ստորագրման ամսաթիվը* 15.09.2006

*Վավերացման ամսաթիվը*  
*Ուժը կորցնելու ամսաթիվը*

**☒ Փոփոխողներ և ինկորպորացիաներ**

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՀՐԱՄԱՆԸ «ՀՀ ԱՍՊԻՐԱՆՏՈՒՐԱՅԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԿԱՐԳ»-Ը ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*«Գրանցված է»*  
ՀՀ արդարադատության  
նախարարության կողմից  
17 հոկտեմբերի 2006 թ.  
Պետական գրանցման թիվ 11006343

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

15 սեպտեմբերի 2006 թ.  
ք. Երևան

N 740-Ն

**Հ Ր Ա Մ Ա Ն**

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՍՊԻՐԱՆՏՈՒՐԱՅԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԿԱՐԳ»-Ը ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետությունում ասպիրանտուրայի ընդունելության գործընթացը կանոնակարգելու նպատակով.

*Հրամայում եմ՝*

1. Հաստատել «Հայաստանի Հանրապետությունում ասպիրանտուրայի ընդունելության կարգ»-ը (Հավելվածը կցվում է):
2. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ կրթության և գիտության նախարարի 2006թ. ապրիլի 4-ի «Հայաստանի Հանրապետությունում ասպիրանտուրայի ընդունելության քննությունների և ստուգարքների անցկացման կարգ»-ը հաստատելու մասին» թիվ 207-Ն հրամանը:
3. Գիտության և հետբուհական կրթության վարչությանը (պետ՝ Ա. Քոչյան), իրավաբանական վարչությանը (պետ՝ Մ. Գրիգորյան) 1-ին կետով հաստատված կարգը 3-օրյա ժամկետում ներկայացնել գրանցման ՀՀ արդարադատության նախարարություն:
4. Գիտության և հետբուհական կրթության վարչությանը (պետ՝ Ա. Քոչյան) գրանցումից հետո 5-օրյա ժամկետում կարգի մասին տեղեկացնել բոլոր բարձրագույն ուսումնական հաստատություններին և գիտական կազմակերպություններին:

5. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել է ՀՀ կրթության և գիտության փոխնախարար պրն. Ա. Ավետիսյանին:

**ՀՀ կրթության և գիտության նախարար՝**

**Լ. Մկրտչյան**

Հավելված  
ՀՀ կրթության և գիտության նախարարի  
2006 թ. սեպտեմբերի 15-ի  
N 740-Ն հրամանի

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՍՊԻՐԱՆՏՈՒՐԱՅԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ**

**Կ Ա Ր Գ**

**1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

1.1 Սույն կարգն ընդունված է «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 18 - րդ հոդվածի 1-ին կետի և 21-րդ հոդվածի 9-րդ կետի պահանջներին համապատասխան:

1.2 Սույն կարգով սահմանվում է Հայաստանի Հանրապետությունում պետական և հավատարմագրված բարձրագույն ուսումնական հաստատությունների, ինչպես նաև հետբուհական կրթական ծրագրեր իրականացնող կազմակերպությունների (այսուհետև՝ կազմակերպություններ) ասպիրանտուրայի ընդունելության կարգը:

**2. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱՅՈՒՅՅԸ**

2.1 Կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարի հրամանով ասպիրանտուրայի ընդունելության կազմակերպման համար ստեղծվում է ընդունող հանձնաժողով:

2.2 Ասպիրանտուրա դիմորդը ավարտական տարվա ընթացքում հանձնում է օտար լեզվից և ինֆորմատիկայի և համակարգչից օգտվելու հիմունքների տարբերակված ստուգարքներ (սահմանված ներքին շեմով՝ բալային գնահատումով)

ա) անգլերեն լեզու-«TOEFL» (iBT) (այԲԻԹԻ) և iTP (այԹԻՓԻ) ստորին անցումային միավորին համապատասխան. «TOEFL» (iTP) միավորների համապատասխանեցումն «TOEFL» (iBT)-ին իրականացնելիս առաջնորդվել համաձայն Կրթական թեստավորման ծառայության /ETS/ /www.ets.org/ պաշտոնական կայքէջում տեղադրված ուղեցույցի.

բ) գերմաներեն և ֆրանսերեն լեզուներ - «on DaF» և «TCF» պահանջներին համապատասխան մակարդակով: Մասնագիտության առանձնահատկությունից ելնելով դիմորդը կարող է հանձնել քննություն այլ օտար լեզվից՝ նախարարության թույլտվությամբ.

գ) «Համակարգչից օգտվելու հմտություններ» - համակարգչից օգտվելու հմտությունների ծրագրերի նվազագույն մակարդակի պահանջներին համապատասխան:

2.2 կետի ա) և բ) ենթակետերի դրույթները չեն տարածվում 2007-2008 ուսումնական տարվա ասպիրանտուրայի ընդունելության նպաստի ձևով ուսման վճարի փոխհատուցմամբ և վճարովի, հեռակա ուսուցմամբ տեղերի վրա:

**(2.2-րդ կետը փոփ. 14.11.06 N 910-Ն, լրաց. 11.09.07 N 797-Ն, 06.07.11 N 781-Ն, փոփ., խմբ. 23.04.13 N 450-Ն)**

2.3 Օտար լեզվի և ինֆորմատիկայից և համակարգչից օգտվելու հիմունքներից տարբերակված ստուգարքների արդյունքները գործերը հանձնելիս ներկայացվում են կազմակերպությունների ընդունող հանձնաժողովներին:

2.4 Ասպիրանտուրայի ընդունելության մասնագիտական քննության անցկացման համար կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարի հրամանով ստեղծվում են մասնագիտական քննական հանձնաժողովներ (այսուհետև՝ հանձնաժողովներ): Մասնագիտական հանձնաժողովների կազմում ընդգրկվում են կազմակերպությունում աշխատող տվյալ մասնագիտությամբ գիտության դոկտորի գիտական աստիճան կամ պրոֆեսորի գիտական կոչում ունեցող գիտամանկավարժական և գիտական կադրեր: Համապատասխան կադրերի բացակայության դեպքում մասնագիտական հանձնաժողովի կազմում կարող են ներգրավվել մասնագետներ այլ կազմակերպություններից:

2.5 Մասնագիտական քննությանը մասնակցելու թույլտվությունը ասպիրանտուրա ընդունվողին տալիս է կազմակերպության ընդունող հանձնաժողովը՝ օտար լեզվից և ինֆորմատիկայից և համակարգչից օգտվելու հիմունքներից տարբերակված ստուգարքների դրական արդյունքների և ներկայացված գիտական ռեֆերատի (առնվազն 20 տպագրական էջի սահմաններում՝ հրատարակված գիտական աշխատանքների, գյուտերի, հայտնագործությունների և գիտահետազոտական աշխատանքների մասին հաշվետվությունների բացակայության դեպքում) վերաբերյալ մասնագիտական ամբիոնի (սեկտորի, դեպարտամենտի) կամ գիտական ստորաբաժանման կողմից գրավոր դրական

գրախոսականի դեպքում:

Ասայիրանտուրայի ընդունելության մասնագիտական քննությունների անցկացման ժամանակացույցը հաստատում է կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարը և քննությունների սկսվելուց 1 շաբաթ առաջ տեղեկացնում է ՀՀ կրթության և գիտության նախարարությանը (այսուհետև՝ նախարարություն) քննության անցկացման տեղի և ժամի վերաբերյալ:

2.6 Մասնագիտական քննությունից «բավարար» գնահատական ստացած դիմորդները զրկվում են ասայիրանտուրա ընդունվելու իրավունքից (8-12 միավոր՝ 20 բալանոց սանդղակով, 3 միավոր՝ 5 բալանոց սանդղակով):

2.7 Հարգելի պատճառով մասնագիտական քննությանը չներկայանալու դեպքում սահմանվում է նոր ժամանակացույց ասայիրանտուրայի ընդունելության մասնագիտական քննությունների համար՝ պահպանելով դրանց անցկացման համար սահմանված վերջին ժամկետը: Կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարը նոր ժամանակացույցի մասին տեղեկացնում է նախարարությանը:

### 3. ՔՆՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՆՅԿԱՅՈՒՄԸ

3.1 Մասնագիտական առարկայից քննության հարցաշարը, որն ընդգրկում է ծրագրային ողջ նյութը (առնվազն 100 հարց), կազմվում է կազմակերպությունների մասնագիտական ամբիոնների (դեպարտամենտների), գիտական ստորաբաժանման կամ մասնագիտական հանձնաժողովի կողմից և հաստատվում է կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարի կողմից (տրամադրվում է դիմորդներին): Դրա հիման վրա քննությունից առնվազն 5 օր առաջ հանձնաժողովի նախագահը կազմում է առնվազն 25 հարցատուներ (առաջադրանքներ)՝ ներառելով ողջ հարցաշարը, որոնք հաստատվում են կազմակերպության կնիքով: Հարցատուները յուրաքանչյուր տարի վերահաստատվում են:

Մասնագիտական քննությունների անցկացման ձևը (գրավոր կամ բանավոր) սահմանում է կազմակերպության ընդունող հանձնաժողովը:

3.2 Մասնագիտական առարկայից ասայիրանտուրա ընդունվողի գիտելիքների գնահատումը կատարվում է կազմակերպության ընդունող հանձնաժողովի կողմից մշակված համակարգով՝ հանձնաժողովի կազմում ընդգրկված անդամների առնվազն 2/3-ի ներկայությամբ: Մասնագիտական քննության անցկացումն արձանագրվում է ասայիրանտուրա ընդունվողի քննական թերթում (Ձևը կցվում է)՝ նշելով առաջադրված հարցերը և ստացված գնահատականը: Քննական թերթում ստորագրում են հանձնաժողովի նախագահը և ներկա գտնվող հանձնաժողովի անդամները: Ընդունվողի գիտելիքների գնահատման մասին որոշումը ընդունվում է որպես հանձնաժողովի յուրաքանչյուր անդամի կողմից նշանակված գնահատականների միջին թվաբանականը: Մասնագիտական քննությունը հանձնված է համարվում, եթե դիմորդը ստացել է առնվազն «13» միավոր «20» բալանոց սանդղակով կամ առնվազն «4» միավոր «5» բալանոց սանդղակով:

3.3 Դիմորդը քննության կամ ստուգարքի է ներկայանում անձը հաստատող փաստաթղթով:

3.4 Անգլերեն լեզվից «TOEFL» դասընթացները և տարբերակված ստուգարքները Հայաստանի Հանրապետությունում կազմակերպում են այն կազմակերպությունները, որոնք ունեն համապատասխան պաշտոնական թույլտվություն:

Գերմաներեն լեզվից «on DaF» դասընթացները և ստուգարքը կազմակերպում է DAAD-ն:

Ֆրանսերեն լեզվից TCF դասընթացները և ստուգարքը կազմակերպում է «Alliance Francaise»-ը:

Օտար լեզվից ստուգարքների գնահատման չափանիշները սահմանվում են վերոհիշյալ ծրագրերին համապատասխան: Յուրաքանչյուր տարվա նոյեմբերի վերջին տասնօրյակում ՀՀ կրթության և գիտության նախարարությունը հրապարակում է տվյալ տարվա ընդունելության համար առարկայական անցումային շեմը՝ ըստ մասնագիտությունների (բնագիտական, տեխնիկական և հումանիտար):

*(3.4-րդ կետը փոփ. 14.11.06 N 910-Ն, լրաց. 28.02.07 N 115-Ն, խմբ. 24.02.11 N 125-Ն)*

3.5 Ինֆորմատիկայից և համակարգչից օգտվելու հիմունքներից ստուգարքի ծրագիրը և հարցաշարը կազմվում է ՀՀ կրթության և գիտության նախարարության ստեղծված առարկայական հանձնաժողովի կողմից: Ստուգարքն ընդունում է Երևանի պետական համալսարանի հաշվիչ կենտրոնը Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանը և ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան:

*(3.5-րդ կետը լրաց. 14.11.06 N 910-Ն)*

3.6 Նշված ստուգարքները հանձնվում են ուսումնական տարվա ընթացքում՝ մինչև ասայիրանտուրայի ընդունելության հայտարարությունը: Ստուգարքներից անբավարար գնահատական ստացած դիմորդը կարող է դրանք վերահանձնել մինչև ընդունելության գործերի հանձնումը:

### 4. ՄՐՅՈՒՅԹԻ ԱՆՅԿԱՅՈՒՄ


4.1 Մրցույթն իրականացվում է ըստ մասնագիտական քննությունից ստացած գնահատականի: Մասնագիտական քննությունից ստացած հավասար գնահատականների դեպքում հաշվի են առնվում հետևյալ ցուցանիշները ըստ հերթականության՝

ա) օտար լեզվից և ինֆորմատիկայի և համակարգչից օգտվելու հիմունքների տարբերակված ստուգարքներից ստացած գնահատականները (գումարային ձևով),

բ) հրատարակված գիտական աշխատանքների քանակը,

- գ) մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի դիպլոմի ներդիրում գրանցված բոլոր գնահատականների միջինը,
- դ) մագիստրոսական ավարտական աշխատանքի պաշտպանության և դիպլոմավորված մասնագետի դիպլոմային աշխատանքի գնահատականը,
- ե) միջազգային կամ հանրապետական ուսանողական առարկայական մրցույթներում կամ օլիմպիադաներում ստացած դիպլոմները կամ միջազգային գիտաժողովներում մասնակցությունը (զեկուցումները):

**ՁԵՎ  
ԱՍՊԻՐԱՆՏՈՒՐԱ ԸՆԴՈՒՆՎՈՂԻ  
ՔՆՆԱԿԱՆ ԹԵՐԹԻ**



Անուն, հայրանուն, ազգանուն -----

Գիտական հիմնարկը -----

1. Մասնագիտական առարկա

Քննության հանձնման ամսաթիվը

Առարկայի անվանումը -----

Առաջադրված հարցերը

Գնահատականները

- 1. -----
- 
- 2. -----
- 
- 3. -----
- 

- 
- 
- 
- 
- 
- 

Ընդհանուր գնահատականը -----

Կ.Տ.

Հանձնաժողովի նախագահ՝ -----

Հանձնաժողովի անդամներ՝ -----

2. Օտար լեզուներ

----- [Լեզվից

Քննության հանձնման ամսաթիվը

-----

Առաջադրված հարցերը

Գնահատականները

- 1. -----
- 
- 2. -----
- 
- 3. -----
- 

- 
- 
- 
- 
- 
- 

Ընդհանուր գնահատականը -----

Կ.Տ.

Հանձնաժողովի նախագահ՝ -----

Հանձնաժողովի անդամներ՝ -----

3. Ինֆորմատիկայի հիմունքներ  
(ստուգարք)

Քննության հանձնման ամսաթիվը  
-----

-----  
(ստուգված, չստուգված)

Կ.Տ.

Հանձնաժողովի նախագահ՝ -----

Հանձնաժողովի անդամներ՝ -----